**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՏԵՓԱՆՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ ԱՎԱԳԻ**

# ԱՆՁԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ, ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ԷԿԶԻՍՏԵՆՑԻԱԼ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՏԱՐՐ և ԲԱԶՄԱՏԱՐՐ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Ժ Թ.00.01 – «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**Երևան 2026**

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

**Գիտական ղեկավար `** հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝
**Ասյա Սուրենի Բերբերյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝** հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝
**Մելսիկ Պարգևի Մկրտումյան**

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝
**Նարինե Գագիկի Խաչատրյան**

**Առաջատար կազմակերպություն՝** Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է **2026թ. մարտի 17-ին, ժամը՝ 12:00-ին,** Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է **2026թ. փետրվարի 17-ին:**

Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Կամո Վարդանյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության արդիականությունը:** Հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է անձի ինքնության և էկզիստենցիալ ամբողջականության հոգեբանական առանձնահատկությունների՝ հանդուրժողականության ձևավորման վրա ունեցած ազդեցության բացահայտման անհրաժեշտությամբ: Ժամանակակից մշակութային խաչաձևման և հասարակության բազմազանության իրողությունները արդիական են դարձնում հանդուրժողական վերաբերմունքի ձևավորման խնդիրը: Ներկայիս ուսումնասիրության արդիականությունն առավել ընդգծվում է նաև այն հանգամանքով, որ ազգային միատարր և բազմատարր միջավայրերում ձևավորված անձանց ինքնության, հանդուրժողականության և էկզիստենցիալ ամբողջականության փոխկապակցվածության հարցը դեռևս բավարար չափով ուսումնասիրված չէ: Սոցիալ-մշակութային տարածքում գոյություն ունեցող կոնկրետ համայնքների դիտարկումը կնպաստի Հայաստանի և Ռուսաստանի ուսանողության շրջանում հանդուրժողականության՝ ազգային միատարր և բազմատարր փոխազդեցության համատեքստից կախվածության բացահայտմանը: Այս առումով առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում երկու ժողովուրդների համեմատական վերլուծությունը, հաշվի առնելով սոցիալ-մշակութային միջավայրերի տարբերությունները և էթնոտարբերակիչ բնութագրերը: Նմանօրինակ համապարփակ հետազոտությունները կատարված հայ ուսանողների շրջանում դեռ սակավաթիվ են:

**Թեմայի գիտական մշակվածության աստիճանը:** Ինքնության ֆենոմենի ուսումնասիրությամբ զբաղվել են հոգեբանական գիտությունների տարբեր ուղղությունների ներկայացուցիչներ (Էրիքսոն, Մարսիա, Ոթերման, Շերիֆ և Շերիֆ, Քեմփբել, Թեջֆել, Թերներ): Արևմտյան հոգեբանության մեջ ինքնության հասկացությունը հաճախ հոմանիշ է դիտարկվել այնպիսի տերմինների հետ, ինչպիսիք են «Ես-կոնցեպցիան» և «Ես-պատկերի» (Ջեյմս, Ռոջերս, Բերնս, Ռեմշմիդտ): Խորհրդային հոգեբանության շրջանակներում այս խնդիրը դիտարկվել է որպես անհատի ինքնագիտակցության (Վիգոտսկի, Լեոնտև, Սպիրկին, Ստոլին, Կոն, Մերլին, Չեսնոկովա) հիմնահարց: Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում ինքնության տիպերի (Էրիքսոն, Մարսիա, Ոթերման, Միդ, Գոֆման, Ֆոգելսոն) և էթնիկական ինքնության առանձնահատկությունների հետազոտությունները (Ստոունքվիստ, Ֆիննի, Լեբեդևա, Տատարկո, Սոլդատովա, Ստեֆանենկո, Ապիտյան, Վերկույտեն): Հանդուրժողականության ֆենոմենն ակտիվորեն մշակվում է վերջին տասնամյակների ընթացքում (Օսսովսկա, Ուեյն, Օլպորտ, Ասմոլով, Ուոլցեր, Սոլդատովա, Բարդիեր, Վիդտ, Ժմիրովա, Բոնդիրևա, Ապոլոնով, Բերբերյան և Տուչինա): Անհրաժեշտ է առանձնացնել հանդուրժողականության հետազոտությունները միջէթնիկական հարաբերությունների ոլորտում (Դրոբիժևա, Տատարկո, Լեբեդևա, Սոլդատովա), ինչպես նաև ինքնության և հանդուրժողականության փոխկապակցվածությանը նվիրված ուսումնասիրությունները (Ապոլոնով, Տուչինա, Կարնաուշենկո, Բերբերյան, Լուկինա): Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում անձի էթնոհոգեբանական առանձնահատկությունների դիտարկումը (Արությունյան, Չագայ, Բերրի, Կրիսկո, Լեբեդևա, Կրիսկո, Մելիք-Շահնազարյան):

**Հետազոտության օբյեկտն** է ուսանողության ինքնությունը, հանդուրժողականությունը և էկզիստենցիալ բնութագրերը:

**Հետազոտության առարկան** է ազգային միատարր և բազմատարր միջավայրերում ձևավորված ուսանողության ինքնության, հանդուրժողականության և էկզիստենցիալ ամբողջականության փոխկապակցվածությունը և համեմատական վերլուծությունը:

**Հետազոտության վարկածը:** ենթադրվում է, որ գոյություն ունի փոխկապակցվածություն ինքնության տիպերի, հանդուրժողականության մակարդակի և անձի էկզիստենցիալ բնութագրերի միջև ազգային միատարր և բազմատարր միջավայրերում հայ և ռուս ուսանողության օրինակով:

**Հետազոտության ենթավարկածները՝**

1. Ենթադրվում է, որ հայ և ռուս ուսանողության շրջանում ազգային միատարր և բազմատարր միջավայրերում գոյություն ունեն տարբերություններ ինքնության հոգեբանական առանձնահատկությունների, հանդուրժողականության բնութագրերի և էկզիստենցիալ բնութագրերի որոշակի միջին ցուցանիշներում;
2. Ենթադրվում է, որ գոյություն ունի փոխկապակցվածություն ուսանող երիտասարդության որոշ էթնիկական նույնականության տիպերի և անձի հանդուրժողականության ցուցանիշների միջև;
3. Ենթադրվում է, որ գոյություն ունի փոխկապակցվածություն ուսանողության որոշ ինքնության առանձնահատկությունների և էկզիստենցիալ բնութագրերի միջև:

**Հետազոտության նպատակն** է ուսումնասիրել ուսանողության ինքնության, հանդուրժողականության և էկզիստենցիալ ամբողջականության փոխկապակցվածությունը ազգային միատարր և բազմատարր միջավայրերում հայ և ռուս ուսանողության օրինակով:

Հետազոտության նպատակը ձևավորել է **հետազոտության խնդիրները**.

1. Բացահայտել ինքնության և էթնիկական նույնականության հասկացությունների հիմնական գիտական մոտեցումները, վերհանել հանդուրժողականության հոգեբանական առանձնահատկությունները, բնութագրել հանդուրժողականության տեսակները;
2. Դիտարկել ուսանող երիտասարդության հոգեբանական նորագոյացությունները և վերլուծել ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են ուսանողության ինքնության և հանդուրժողականության առանձնահատկություններին;
3. Դիտարկել էկզիստենցիալ հոգեբանության հայեցակարգային հիմքերը, ուսումնասիրել անձի բնութագրման էկզիստենցիալ մոտեցումները, վերլուծել երիտասարդության էկզիստենցիալ բնութագրերի ուսումնասիրությունները;
4. Բացահայտել հայերի և ռուսների էթնոհոգեբանական առանձնահատկությունները ազգային միատարր և բազմատարր միջավայրերում;
5. Հիմնավորել մեթոդական գործիքակազմը հանդուրժողականության, ինքնության և անձի էկզիստենցիալ բնութագրերի ցուցանիշները բացահայտելու համար;
6. Կատարել ինքնության, հանդուրժողականության և էկզիստենցիալ ամբողջականության փոխկապակցվածության հետազոտություն ազգային միատարր և բազմատարր միջավայրերում հայ և ռուս ուսանողության օրինակով, վերլուծել և մեկնաբանել հետազոտության արդյունքները;
7. Մշակել հանդուրժողականության ձևավորման ծրագիր ազգային միատարր և բազմատարր միջավայրերում ինքնության և էկզիստենցիալ բնութագրերի առանձնահատկությունների հիման վրա:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքը** ձևավորվել է հետևյալ տեսությունների հիման վրա՝ Է. Էրիկսոնի ինքնության էպիգենետիկ կոնցեպցիա, Ջ. Մարսիայի անձնային ինքնության կարգավիճակների դասակարգում և Գ.Ու. Սոլդատովայի և Ս.Վ. Ռիժովայի էթնիկական նույնականության տիպոլոգիա: Հանդուրժողականության ֆենոմենի և միջազգային փոխազդեցության վերլուծությունը հիմնված է միջէթնիկական փոխազդեցության (Ն.Մ. Լեբեդևա, Տ.Գ. Ստեֆանենկո, Գ.Ու. Սոլդատովա, Ա.Ս. Բերբերյան, Օ.Ռ. Տուչինա) և էթնոհոգեբանական

առանձնահատկությունների (Վ. Գ. Կրիսկո, Ն.Մ. Լեբեդևա, Տ.Գ. Ստեֆանենկո) ոլորտում կատարված հետազոտությունների վրա: Անձի էկզիստենցիալ բնութագրերի ուսումնասիրության համար առանձնահատուկ նշանակություն ունի էկզիստենցիալ վերլուծության կոնցեպցիան (Վ. Ֆրանկլ, Ա. Լենգլե):

**Հետազոտության մեթոդները:** Գործիքակազմը ներառում է գիտական աղբյուրների տեսական վերլուծություն, տեսական և էմպիրիկ հետազոտությունների համեմատություն և մեկնաբանում, հոգեախտորոշիչ մեթոդիկաներ: Տվյալների մշակումն իրականացվել է IBM SPSS ծրագրային փաթեթի միջոցով: Էմպիրիկ հետազոտության շրջանակում օգտագործվել են հեղինակային հարցաթերթ և թեստավորում, որը ներառել է մի շարք հոգեախտորոշիչ մեթոդիկաներ՝ «Ո՞վ եմ ես» մեթոդիկա, Մ. Կուն և Թ. Մաքպարթլենդ (ադապտացված Թ.Վ. Ռումյանցևայի կողմից), «Անձնային ինքնության ուսումնասիրության մեթոդիկա», Լ. Բ. Շնեյդեր, «Հանդուրժողականության ինդեքս» էքսպրես-հարցարան, Գ.Ու. Սոլդատովա, Օ.Ա. Կրավցովա, Օ.Ե. Խուխլաև և Լ.Ա. Շայգերովա, «Էթնիկական նույնականության տիպեր» հոգեբանական թեստային մեթոդիկա, Գ.Ու. Սոլդատովա և Ս.Վ. Ռիժովա, «Մշակութային-արժեքային դիֆերենցիալ», Գ.Ու. Սոլդատովա և Ս.Վ. Ռիժովա, «Էկզիստենցիայի սանդղակ» (Existenzskala), Ա. Լենգլե և Կ. Օրգլեր (Ս.Վ. Կրիվցովայի ադապտացիայով), «Հատկանիշների վերագրումը» մեթոդիկա, Դ. Կաց և Կ. Բրեյլի:

**Հետազոտության ընտրանքի ընդհանուր բնութագիրը**: Հետազոտությանը մասնակցել են 18 տարեկան և բարձր (միջին տարիքը 20.8), ՀՀ և ՌԴ մի շարք քաղաքների թվով 200 ուսանողներ: Հետազոտության բոլոր մասնակիցները ուսանողներ են, ովքեր բաժանվել են երկու խմբի՝ հայ ուսանողներ ազգային միատարր միջավայրից (Խումբ 1, N=100) և ռուս ուսանողներ ազգային բազմատարր միջավայրից (Խումբ 2, N=100):

**Հետազոտության գիտական նորույթը:** Անձի էկզիստենցիալ բնութագրերի փոխկապակցվածությունը հանդուրժողականության և ինքնության զարգացման առանձնահատկությունների հետ առաջին անգամ է ուսումնասիրվում համապարփակ կերպով: Առաջին անգամ ներկայացվում է համեմատական վերլուծություն հայ և ռուս ուսանող երիտասարդության ինքնության, հանդուրժողականության և էկզիստենցիալ բնութագրերի հոգեբանական ասպեկտների վերաբերյալ, որն հաստատում է որոշ ցուցանիշների միջև վիճակագրորեն նշանակալի տարբերությունների առկայությունը: Ստացված նոր էմպիրիկ տվյալները բացահայտել են ինքնության և էկզիստենցիալ բնութագրերի ազդեցությունը հայ և ռուս ուսանողության հանդուրժողականության մակարդակի վրա: Բացահայտվել են տարբերություններ՝ կապված ազգային միատարր և բազմատարր միջավայրերի համատեքստի հետ, այն է՝ էկզիստենցիալ բնութագրերը ուղղակի ազդեցություն են ունենում հանդուրժողականության մակարդակի վրա ազգային բազմատարր միջավայրում, սակայն կորցնում են իրենց նշանակությունը՝ ազգային միատարր միջավայրի պայմաններում:

**Հետազոտության տեսական նշանակությունը** նրանում է, որ չնայած հարուստ գիտական գրականությանը հանդուրժողականության և ինքնության հարցերի վերաբերյալ, դրանց փոխկապակցվածությունը էկզիստենցիալ ամբողջականության հետ դեռևս չի ստացել բավարար ուսումնասիրություն: Հետազոտության արդյունքները կնպաստեն ինքնության և հանդուրժողականության հասկացությունների, դրանց սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ընդլայնված պատկերացման ձևավորմանը: Ստացված տվյալները թույլ կտան հաստատել ուսանող երիտասարդության էկզիստենցիալ ամբողջականության և հանդուրժողականության մակարդակի փոխկապակցվածությունը և դրա բնութագրերը, ինչպես նաև

կբացահայտեն ինքնության բաղադրիչների և էկզիստենցիալ ցուցանիշների կապը: Հետազոտության նյութերը կարող են օգտակար լինել դասախոսությունների և սեմինարների պատրաստման, կրթական ծրագրերի մշակման համար:

**Հետազոտության գործնական նշանակությունը** պայմանավորված է նրանով, որ վերոնշյալ խնդիրների ուսումնասիրությունը հնարավորություն կտա գտնել հանդուրժողական անձի ձևավորման ուղիներն ու մեթոդները, անհանդուրժող վերաբերմունքի հաղթահարման, սխալ կարծրատիպերի և նախապաշարմունքների փոփոխման մեթոդները: Հետազոտությունը և մեր կողմից մշակված հոգեբանական ծրագիրը կարող են օգտագործվել անհատական և խմբային խորհրդակցությունների, զրույցների, զարգացման կենտրոններում և հոգեբանական ծառայություններում դրական ինքնության ձևավորման, ես-պատկերի, էթնիկական նույնականության և էկզիստենցիալ խնդիրների լուծման համար անձնական ռեսուրսների որոնման համար: Հոգեախտորոշման և տվյալների վերլուծության և մեկնաբանության տվյալ մոտեցումները կարող են օգտագործվել նաև այլ էթնիկական խմբերի ներկայացուցիչների հետ աշխատանքում: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել թրենինգային ծրագրերի և դրական ինքնության ձևավորման և հանդուրժողական վերաբերմունքի զարգացման նվիրված մեթոդաբանական նյութերի մշակման համար:

**Ստացված տվյալների հուսալիությունն ու հավաստիությունը:** Արդյունքների հուսալիությունն ու հավաստիությունն ապահովվում են ուսումնասիրվող խնդրի համակողմանի տեսական վերլուծությամբ, հետազոտության ծրագրի մեթոդաբանական հիմնավորվածությամբ, կիրառված մեթոդների ու մեթոդիկաների համապատասխանությամբ առարկային, նպատակին և խնդիրներին: Վիճակագրական հավաստիությունը երաշխավորվում է հետազոտական ընտրանքի բավարար ներկայացուցչականությամբ և ժամանակակից մաթեմատիկական-վիճակագրական մեթոդների կիրառմամբ:

**Պաշտպանության ներկայացվող դրույթները:**

1. Ինքնությունը, որպես դինամիկ գործընթաց, զարգանում է ողջ կյանքի ընթացքում և հանդես է գալիս որպես անձի ինքնուրույնության, ամբողջականության և հասունության հիմնական բնութագիր՝ սուբյեկտիվորեն վերապրվելով անձնական նույնականության և շարունակականության զգացումով: Էթնիկական ինքնությունը հանդիսանում է որպես որոշակի էթնիկական խմբին պատկանելության գիտակցում՝ միաժամանակ ընդգծելով այդ խմբին պատկանելու նշանակությունը: Անձնային ինքնության կարգավիճակը և էթնիկական նույնականության տիպը հանդես են գալիս որպես սեփական անձի նկատմամբ ամբողջական և դրական վերաբերմունքի ձևավորման հիմնական ցուցանիշներ:
2. Հանդուրժողականությունը, որպես բազմաչափ երևույթ, առանցքային դեր ունի հասարակական հարաբերությունների համատեքստում վարքագծի ձևավորման գործում և ենթադրում է ակտիվ կենսական դիրքորոշում ու հոգեբանական պատրաստակամություն հանդուրժողության հանդեպ: Այն հիմնվում է մարդկանց նկատմամբ արժեքային վերաբերմունքի և ուրիշների տարբեր կարծիքներ ունենալու իրավունքի ճանաչման վրա: Հանդուրժողականության մակարդակը կարող է տարբերվել՝ կախված ազգային միատարր կամ բազմատարր միջավայրերի պայմաններից:
3. Էկզիստենցիալ ամբողջականությունը ներառում է սեփական անձի սուբյեկտիվ գնահատումը և հանդիսանում է որպես խորքային ներքին համաձայնության ապրում կատարվածի կամ գոյություն ունեցողի նկատմամբ; սեփական

հանգամանքներին դրանց համապատասխանության ապրումը և սեփական էության նույնականությունը: Էկզիստենցիալ ամբողջականության մակարդակը արտահայտում է մարդու կյանքի իմաստավորվածության աստիճանը, ինչպես նաև ներքին համաձայնության առաջացման հաճախականությունը՝ անհատի էության և նրա որոշումների միջև: Անձի ամբողջականությունը հասկացվում է որպես մարդու անխզելի կապը աշխարհի և այլ մարդկանց հետ: Այս հարցերն առանձնահատուկ արդիականություն են ստանում ուսանողական տարիքում, երբ տեղի է ունենում բնավորության ձևավորումն ու կայունացումը, արժեքային կողմնորոշումների հստակեցումը, բարձրանում են ինքնագիտակցության ու կյանքի իմաստավորվածության մակարդակները, իսկ ուսումնական-մասնագիտական գործունեությունը ստանձնում է առաջատար դեր:

4. Հայաստանի և Ռուսաստանի ազգային միատարր և բազմատարր միջավայրերի երիտասարդության շրջանում առկա են վիճակագրորեն նշանակալի տարբերություններ անձնային ինքնության հոգեբանական առանձնահատկությունների, էկզիստենցիալ ամբողջականության բնութագրերի և հանդուրժողականության մակարդակի որոշ միջին ցուցանիշների միջև: Գոյություն ունեն նշանակալի փոխկապակցվածություններ որոշ էթնիկական նույնականության տիպերի և հանդուրժողականության ընդհանուր մակարդակի, ինչպես նաև որոշ էթնիկական նույնականության տիպերի և էթնիկական հանդուրժողականության մակարդակի միջև՝ ուսանողության շրջանում: Վիճակագրորեն նշանակալի փոխկապակցություններ են հայտնաբերվել նաև ուսանողների էթնիկական և անձնային ինքնության որոշ ասպեկտների ու էկզիստենցիալ բնութագրերի միջև:
5. Էթնիկական նույնականության տիպի ցուցանիշները հանդուրժողականության մակարդակի հիմնական կանխորոշիչ գործոններն են: Ազգային միատարր միջավայրում արդիական է «էթնոէգոիզմ» տիպը, մինչդեռ ազգային բազմատարր միջավայրում նշանակություն են ձեռք բերում «էթնոէգոիզմ», «էթնոնիհիլիզմ» ցուցանիշները, ինչպես նաև «Ինքնագիտակցում» էկզիստենցիալ ցուցանիշը:

**Ատենախոսության փորձաքննությունը:** Հետազոտության հիմնական տեսական դրույթներն ու գործնական արդյունքները ներկայացվել են Հայ-Ռուսական համալսարանի հոգեբանության ամբիոնի նիստերում: Արդյունքները քննարկվել են տեղական և միջազգային գիտաժողովներում. III միջազգային երիտասարդ հետազոտողների գիտական աշխատանքների մրցույթում, նվիրված խաչմշակութային հոգեբանության և բազմամշակութային կրթության խնդիրներին՝ «Երեխաների և երիտասարդության էթնիկական սոցիալականացման գործընթացի հոգեբանական-մանկավարժական ուղեկցում բազմամշակութային աշխարհում. մշակույթների երկխոսությունից՝ երկխոսության մշակույթ» (Կուրսկ, 2021); XXVIII միջազգային ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների «Լոմոնոսով» գիտաժողովում (Մոսկվա, 2021); IV միջազգային երիտասարդ հետազոտողների գիտական աշխատանքների մրցույթում նվիրված խաչմշակութային հոգեբանության և բազմամշակութային կրթության խնդիրներին՝ «Ազգայինի և համամարդկայինի դիալեկտիկան երեխաների և երիտասարդության էթնիկական սոցիալականացման գործընթացում. սոցիալականացման տեսությունն ու պրակտիկան տեղեկատվական դարում» (Կուրսկ, 2022); XXIX միջազգային ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների «Լոմոնոսով» գիտաժողովում (Մոսկվա, 2022); IV միջազգային ուսանողական գիտական-գործնական գիտաժողովում (Վորոնեժ, 2022); ՀՌՀ XVI տարեկան գիտաժողովում (Երևան, 2022); ՀՌՀ XVII տարեկան գիտաժողովում

(Երևան, 2023); ԵՊՀ «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» միջազգային 10-րդ գիտաժողովում (Երևան, 2025):

Ատենախոսության հիմնական արդյունքները արտացոլված են հեղինակի 9 հոդվածներում, որոնք տպագրվել են Scopus (Q3) և Web of Science երաշխավորված գրախոսվող ամսագրում, ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և ՌԴ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից երաշխավորված գիտական պարբերականներում, ինչպես նաև գիտաժողովների նյութերի ժողովածուներում:

**Ատենախոսության կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, վերջաբանից, գրականության ցանկից և 4 հավելվածից: Գրականության ցանկը ներառում է 258 աղբյուր, որոնցից 96-ը օտար լեզուներով: Ատենախոսությունը պարունակում է 17 գծանկար և 18 աղյուսակ: Աշխատանքի ծավալն առանց հավելվածների 162 էջ է:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունը** ներկայացնում է թեմայի արդիականությունը, աշխատանքի նպատակը և խնդիրները, սահմանված հետազոտության վարկածը և ենթավարկածները, օբյեկտը, առարկան, տեսամեթոդաբանական հիմքերն ու կիրառված մեթոդները: Ներածության մեջ բացահայտված է ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության իրականացման փուլերն ու ընտրանքի համակազմը, հետազոտության փորձաքննությունը, հուսալիությունն ու հավաստիությունն, գիտական նորույթը, նշված են պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին՝ **«Անձի ինքնության և հանդուրժողականության տեսական-մեթոդաբանական հիմքերը»** գլխում ներկայացվել և քննարկվել են ինքնության և հանդուրժողականության տեսական-մեթոդաբանական հիմքերը: Այս գլխում առանձնացվել են ինքնության երևույթի վերաբերյալ հիմնական գիտական մոտեցումները: Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ «Ինքնության տեսական-մեթոդաբանական հիմքերը, դրա էությունը և տեսակները» կայացվել է ինքնության էության, զարգացման փուլերի և տիպերի (Վ. Ջեյմս, Ջ.Հ. Միդ, Է. Էրիկսոն, Ա. Օթերման, Է. Գոֆման, Ջ.Է. Մարսիա, Մ. Շերիֆ, Ջ.Թ. Քեմփբել, Հ. Թեջֆել, Ջ. Թերներ, Լ.Բ. Շնեյդեր), այդ թվում ազգային ինքնության և էթնիկական նույնականության զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրություն (Ժ. Պիաժե, Մ. Վերկույտեն, Ն.Մ. Լեբեդևա, Գ.Ու. Սոլդատովա, Ս.Վ. Ռիժովա, Ա.Ս. Բերբերյան, Տ.Գ. Ստեֆանենկո): Երկրորդ՝ «Հանդուրժողականության հոգեբանական առանձնահատկությունները, հանդուրժողականության տեսակների բնութագիրը» ենթագլխում ուսումնասիրվել են հանդուրժողականության հոգեբանական առանձնահատկությունները, և առանձնացվել են դրա տեսակները, ձևակերպվել է հանդուրժողականության սահմանումը (Ն.Մ. Լեբեդևա, Լ. Դրոբիժևա, Տ.Գ. Ստեֆանենկո, Գ.Ու. Սոլդատովա, Ա.Ս. Բերբերյան, Օ.Ռ. Տուչինա): Նույն գլխի երրորդ՝ «Ուսանող երիտասարդության հոգեբանական նորագոյացությունները» ենթագլխում քննարկվել են ուսանողության հոգեբանական նորագոյացությունները, որոնք պայմանավորում են անձի կարևոր կառուցվածքների զարգացումն և հասարակական հարաբերությունների ու որակների ձևավորումը (Բ.Գ. Անանև, Լ.Ս. Վիգոտսկի, Ա.Ն. Լեոնտև, Է. Էրիկսոն, Ի.Ս. Կոն, Դ.Բ. Բրոմլեյ): Չորրորդ ենթագլխում՝ «Ուսանող երիտասարդության ինքնության և հանդուրժողականության հետազոտությունների վերլուծություն» վերլուծվել են ուսանողության ինքնության և հանդուրժողականության առանձնահատկություններին

նվիրված հետազոտությունները (Ի.Ա. Ապոլլոնով, Ա.Ս. Բերբերյան, Օ.Ռ. Տուչինա, Ա.Կ. Լուկինա և այլք):

Ատենախոսության երկրորդ՝ **«Երիտասարդության էկզիստենցիալ ամբողջականությունը ազգային միատարր և բազմատարր միջավայրերում»** գլխում ներկայացվել և վերլուծության է ենթարկվել երիտասարդության էկզիստենցիալ ամբողջականությունը ազգային միատարր և բազմատարր միջավայրերում: Այս նպատակով երկրորդ գլխի առաջին՝ «Էկզիստենցիալ հոգեբանության կոնցեպտուալ հիմքերը» ենթագլխում քննարկվել են էկզիստենցիալիզմի և էկզիստենցիալ հոգեբանության տեսական հիմքերը, ուսումնասիրվել են դրանց հիմնական խնդիրները (Ի. Յալոմ, Ս.Լ. Քոոլե, Ժ-Պ. Սարտր, Ս. դը Բովուար, Ս. Կիերկեգոր, Ն. Խավաջա, Ջ. Ուեբբեր, Ջ. Գրինբերգ, Կ. Յասպերս): Երկրորդ գլխի երկրորդ՝ «Երիտասարդության անձի էկզիստենցիալ բնութագրերի հետազոտությունները» ենթագլխում ուսումնասիրվել են մոտեցումները անձի էկզիստենցիալ բնութագրմանը և էկզիստենցիալ ամբողջականության հասկացությունը էկզիստենցիալ վերլուծության տեսանկյունից, ինչպես նաև դիտարկվել են անձի էկզիստենցիալ բնութագրերի առկա հետազոտությունները (Է. Ֆրոմմ, Վ. Ֆրանկլ, Ա. Լենգլե, Է. վան Դոյրցեն): Սույն գլխի երրորդ՝ «Հայերի և ռուսների անձի էթնոհոգեբանական առանձնահատկությունները» ենթագլխում քննարկվել են հայերի և ռուսների էթնոհոգեբանական առանձնահատկությունները որպես ազգային միատարր և բազմատարր միջավայրերի ներկայացուցիչներ (Վ.Գ. Կրիսկո, Ն.Մ. Լեբեդևա, Տ.Գ. Ստեֆանենկո, Ս.Մ. Հարությունյան, Լ.Գ. Պոչեբուտ): Վերլուծությունը թույլ է տվել բացահայտել հայերի և ռուսների անհատական էթնոհոգեբանական առանձնահատկությունները և ցույց է տվել, որ այդ առանձնահատկությունները տարբեր դրսևորումներ են ստանում կախված միջավայրի առանձնահատկություններից:

Ատենախոսության երրորդ գլուխը կրում է **«Ազգային միատարր և բազմատարր միջավայրում անձի ինքնության, հանդուրժողականության և էկզիստենցիալ ամբողջականության փոխկապակցվածության էմպիրիկ հետազոտություն»** խորագիրը և ներկայացնում է էմպիրիկ հետազոտությունը, որի նպատակն էր բացահայտել ինքնության, հանդուրժողականության և անձի էկզիստենցիալ ամբողջականության միջև առկա փոխկապակցվածությունները ազգային միատարր և բազմատարր միջավայրերում հայ և ռուս ուսանողության օրինակով: Երրորդ գլխի առաջին՝ «Կազմակերպում և հետազոտության մեթոդներ» ենթագլխում ներկայացվում է հետազոտության իրականացման ընթացքը՝ հետազոտության ծրագիրն և փուլերը, ընտրանքի բնութագիրը, հետազոտության մեթոդները և մեթոդական գործիքակազմի հիմնավորումը:

Երրորդ գլխի երկրորդ՝ «Արդյունքների վերլուծություն և մեկնաբանում» ենթագլխում ներկայացված են հեղինակային հարցարանի և մեթոդիկաների միջոցով ստացված տվյալների որակական և քանակական մշակումը և վերլուծությունը:

**Հարցման արդյունքները հետևյալն են.** Միջէթնիկական շփման փորձի վերաբերյալ՝ ինչպես 1-ին (62%), այնպես էլ 2-րդ խմբում (79%) հարցվողների մեծամասնությունը նշել են, որ հեշտությամբ են շփվում այլ էթնիկական խմբերի ներկայացուցիչների հետ, թեև 1-ին խմբում հարաբերականորեն ավելի մեծ մասն է նշել, որ շփման փորձը կախված է ազգությունից (24%՝ ընդդեմ 11%-ի): ՝ ընդգծելով, որ էթնիկական պատկանելությունը շատերի համար նշանակալի գործոն չէ դրական զգացմունքների ձևավորման հարցում. միևնույն ժամանակ, 1-ին խմբում այդ կապը տեսնողների մասնաբաժինը փոքր-ինչ բարձր է, ինչը կարող է մատնանշել որոշակի ավելի զգայուն վերաբերմունք միջէթնիկական տարբերություններին:

Դրական զգացմունքների առկայության գնահատման ժամանակ անկախ զրուցակցի էթնիկական պատկանելությունից երկու խմբերում էլ հարցվածների ճնշող մեծամասնությունը՝ 1-ին խմբում 89%, 2-րդ խմբում՝ 92%, նշել է, որ շփման ընթացքում դրական զգացմունքներ է ապրում՝ անկախ զրուցակցի էթնիկական պատկանելությունից: Երկու խմբերում էլ գերակշռում է միջէթնիկական շփման հանդեպ բաց և դրական վերաբերմունք՝ ընդգծելով, որ էթնիկական պատկանելությունը շատերի համար նշանակալի գործոն չէ դրական զգացմունքների ձևավորման հարցում. միևնույն ժամանակ, 1-ին խմբում այդ կապը տեսնողների մասնաբաժինը փոքր-ինչ բարձր է, ինչը կարող է մատնանշել որոշակի ավելի զգայուն վերաբերմունք միջէթնիկական տարբերություններին:

«Ո՞վ եմ ես» մեթոդիկայի համաձայն, դիտարկվել են անձի ինքնության բովանդակային բնութագրերը: 1-ին խմբում ինքնության բնութագրերի շրջանում առավել արտահայտված են «Ռեֆլեքսիվ Ես»-ը (96%), «Ակտիվ Ես»-ը (80%), «Հաղորդակցական Ես»-ը (70%) և «Սոցիալական Ես»-ը (54%): 2-րդ խմբում ինքնության բնութագրերի շրջանում առավել արտահայտված է «Ռեֆլեքսիվ Ես» (64%), «Սոցիալական Ես»-ը (52%), «Ակտիվ Ես»-ը (46%) և «Հաղորդակցական Ես»-ը (40%): Վերլուծության արդյունքում պարզվել է, որ 1-ին խմբում ինքնության բոլոր բաղադրիչները արտահայտված են առավել բարձր մակարդակով: Օգտագործված ցուցիչների քանակը վկայում է բարձր տարբերակման մակարդակի մասին, ինչը խոսում է ներքին աշխարհի վրա կենտրոնացվածության, սոցիալական կոմպետենտության և ինքնավարության, ինչպես նաև ինքնավստահության և շփման հմտությունների մասին: 2-րդ խմբում տարբերակման մակարդակը եղել է ավելի ցածր, ինչը կարող է վկայել ինքնավստահության պակասի, կաշկանդվածություն և անհանգստության մասին: Բացի այդ, 2-րդ խմբում առավել հաճախ է դիտվել խնդրահարույց ինքնություն:

Անձնային ինքնության ուսումնասիրման մեթոդիկայի համաձայն բացահայտվել են անձնային ինքնության գերիշխող կարգավիճակները (Գծապատկեր 1). 1-ին խմբում առավել արտահայտված էին «դիֆուզային ինքնություն» (57%) և «մորատորիում» (24%) կարգավիճակները, իսկ 2-րդ խմբում՝ «դիֆուզային ինքնություն» (36%) և «պսևդո դրական ինքնություն» (30%): 1-ին խմբում ընդգծված կարգավիճակները արտացոլում է ակտիվ որոնման գործընթաց ճգնաժամի լուծման ուղղությամբ, մինչդեռ 2-րդ խմբում գերիշխող կարգավիճակները կարող է մատնանշել ինքնության ձևավորման գործընթացում ներքին հակասությունների, իրականության մերժման կամ չափազանցված ինքնընկալման դրսևորումներ:




**Գծապատկեր 1. Անձնային ինքնության կարգավիճակները ըստ Անձնային ինքնության ուսումնասիրման մեթոդիկայի**

«Էթնիկական նույնականության տիպեր» մեթոդիկայի համաձայն պարզվել է, որ երկու խմբերում էլ մեծամասնության շրջանում (1-ին խմբում 82%, 2-րդ խմբում 66%) գերակայում է էթնիկական նույնականության տիպերից նորմա կամ դրական էթնիկական նույնականություն տիպը: Այս տիպի արտահայտվածությունը ցույց է տալիս դրական վերաբերմունք սեփական էթնոսի նկատմամբ՝ պահպանելով դրական վերաբերմունք նաև այլ ազգերի հանդեպ: 2-րդ խմբի որոշ մասնակիցների (10%) շրջանում դիտվել է էթնիկական անտարբերության բարձր մակարդակ, ինչը վկայում է էթնիկական ինքնության որոշակի անկայունության և էթնիկական պատկանելության անորոշության մասին մասին:

«Հանդուրժողականության ինդեքս» էքսպրես-հարցարանի օգնությամբ պարզվել է հանդուրժողականության ընդհանուր մակարդակը և դրա ասպեկտները (Գծապատկեր 2) հարցվողների շրջանում, ցույց տալով միջին մակարդակի հանդուրժողականության գերակայությունը (1-ին խմբում՝ 94%, միջին միավոր՝ 87.85; 2-րդ խմբում՝ 71%, միջին միավոր՝ 92.2): Արդյունքները ցույց են տալիս հանդուրժողական և ոչ հանդուրժողական բնութագրերի համադրություն՝ կախված իրավիճակից: Այս միտումը հաստատվում է նաև ենթասանդղակների արդյունքներով: Նշենք, որ 2-րդ ընտրանքում 1%-ի մոտ արձանագրվել է չափազանց բարձր հանդուրժողականություն, ինչը վկայում է «հանդուրժողականության սահմանների» աղավաղման մասին և կարող է կապված լինել անտարբերության կամ չափազանց մեղմության դրսևորման հետ:




**Գծապատկեր 2. Հանդուրժողականության ասպեկտները և մակարդակը ըստ «Հանդուրժողականության ինդեքս» էքսպրես-հարցարանի**

Արժեքային կողմնորոշումների դիագնոստիկան կատարվել է «Մշակութային-արժեքային դիֆերենցիալ» մեթոդիկայի միջոցով և բացահայտել է ուսումնասիրվող ընտրանքների արժեքային կողմնորոշումները՝ խմբի հանդեպ կողմնորոշում, համագործակցության միտում և թույլ սոցիալական վերահսկողություն, որոնք բնորոշ էին երկու խմբին: Միակ տարբերությունն խմբերի միջև վերաբերում է փոփոխությունների հանդեպ վերաբերմունքին. 1-ին խմբում նկատվում է բաց վերաբերմունք փոփոխությունների նկատմամբ, իսկ 2-րդ խմբում դիմադրություն: Խմբային արժեքային կողմնորոշումների վերլուծությամբ 1-ին խմբում հայտնաբերվել են բարձր կարծրատիպային բնութագրեր (*միջխմբային համաձայնության մակարդակը գերազանցում է 70%*) ավանդույթներին հավատարմությունը (73%), բաց լինելը (70%), դեպի անցյալ ուղղվածությունը (76%), խաղաղասիրությունը (70,67%), ջերմությունը

(77%), մրցակցությունը (75%), ինքնակամությունը (72,67%) և իշխանության հանդեպ անվստահությունը (83,33%): Այս արդյունքները վկայում են, որ հարցվողները ընկալում են իրենց մշակույթը որպես բաց, միաժամանակ պահպանելով ավանդապաշտության և անցյալամետության առանձնահատկությունները: Նրանք ընկալում են իրենց որպես հանդուրժող, ընկերասեր և ջերմ շփման պատրաստ անհատներ, միաժամանակ ընդգծելով մրցակցության հակումները որպես ձեռքբերումներին ուղղված մոտիվացիայի դրսևորում: 2-րդ խմբում բարձր կարծրատիպային բնութագրեր չեն հայտնաբերվել, ինչը վկայում է միջխմբային համաձայնության ցածր մակարդակի մասին:

«Էկզիստենցիայի սանդղակ» մեթոդիկայի միջոցով ուսումնասիրվել են էկզիստենցիալ բնութագրերը (Գծապատկեր 3): 1-ին խմբում արդյունքները միջին են, սակայն համեմատաբար ցածր՝ 178.58 միավոր, որը խոսում է ոչ լիարժեք իմաստավորված էկզիստենցիայի մասին: Ներքին բաց լինելը հնարավորություն է տալիս արձագանքել արտաքին աշխարհի պահանջներին, սակայն սեփական կյանքի իրագործման հարցում նկատվում է զսպվածություն: 1-ին խմբի մեծամասնությունը (64%) ունի էկզիստենցիալ ամբողջականության միջին ընդհանուր ցուցանիշ (G-Wert), 35%-ն ունի ցածր ընդհանուր ցուցանիշ (G-Wert), բարձր մակարդակ հայտնաբերվել է 1%-ի մոտ: 2-րդ խմբի ցուցանիշը (190.58) վկայում է նույնպես ոչ լիարժեք ամբողջականության մասին: Այստեղ կարելի է խոսել գործողությունների հստակության մասին պարտքի գիտակցման հիման վրա: Զգացմունքային ոլորտում նկատվում է հարաբերական թույլ արտահայտվածություն, բայց կյանքի իրագործման ուժ: 2-րդ խմբի մեծամասնությունը (68%) ունի էկզիստենցիալ ամբողջականության միջին ընդհանուր ցուցանիշ, 27%-ն ունի ցածր ցուցանիշ, բարձր ցուցանիշ հայտնաբերվել է 5%-ի մոտ:




SD – Ինքնաօտարացում
ST – Ինքնատրանսցենդավորում
F – Ազատություն
V – Պատասխանատվություն
P – Ինքնագիտակցում
E – Էկզիստենցիալություն
G-Wert – Էկզիստենցիալ ամբողջականություն

**Գծապատկեր 3. Էկզիստենցիալ ցուցանիշները ըստ «Էկզիստենցիայի սանդղակ» մեթոդիկայի**

«Հատկանիշների վերագրումը» մեթոդիկայի համաձայն բացահայտվել են ավտոկարծրատիպերը և հետերոկարծրատիպերը, որոնք երկու խմբերում էլ ընդհանուր առմամբ դրական էին: Հայ էթնոսին վերագրվող բնութագրերը մեծամասամբ համընկել են երկու խմբերում, բացառությամբ այն հանգամանքի, որ ռուս ընտրանքը հայերին վերագրել է հավաքականություն (կոլեկտիվիզմ), մինչդեռ հայ ընտրանքը նշել է անհատականությունը (անհատապաշտություն): Ինչ վերաբերում է ռուսներին վերագրված բնութագրերին, ապա հայերը նրանց վերագրել են ավելի շատ ագրեսիվություն, կրոնամոլություն և ազատասիրությունը:

Սույն գլխի երրորդ` «Հետազոտության արդյունքների վիճակագրական վերլուծություն» ենթագլխում ներկայացվում են ստացված արդյունքների համեմատական և վիճակագրական վերլուծությունը:

**Առաջին ենթավարկածի** համաձայն իրականացվել է միջին ցուցանիշների համեմատություն, նշված են միայն վիճակագրորեն նշանակալի արդյունքները (Աղյուսակ 1): Հայտնաբերվել են տարբերություններ հետևյալ ինքնության տիպերի միջև` էթնոնիհիլիզմ (t=2,08, p<0,05), էթնիկական անտարբերություն (t=3,65, p<0,01), էթնոմեկուսացում (t=2,64, p<0,01) և էթնոֆանատիզմ (t=3,81, p<0,01): Այս տվյալները վկայում են, որ 1-ին խմբում առկա է սեփական էթնոսի գերազանցության զգացողության ավելի բարձր մակարդակ, որն ընդգծում է ազգային մշակութային արժեքներին նվիրվածությունը և սեփական էթնոսի գերակայությունը մարդու իրավունքների նկատմամբ:

Ընդհանուր հանդուրժողականության սանդղակով տարբերությունը (t=2,91, p<0,01), ինչպես նաև էթնիկական հանդուրժողականության (t=2,18, p<0,05) և սոցիալական հանդուրժողականության (t=2,49, p<0,05) սանդղակներով տարբերությունները, վկայում են 2-րդ խմբում հանդուրժողականության ավելի բարձր մակարդակի մասին: Տարբերությունները կարող է պայմանավորված լինել միջավայրի և աշխարհաքաղաքական գործոններով: Հայաստանի հետպատերազմյան անորոշությունը և Արցախից բռնի տեղահանվածների առկայությունը սրում է էթնիկական նույնականությունը և խաթարում է հանդուրժողականության ըմբռնումը: Հակառակը` Ուկրաինայում ընթացող պատերազմական գործողությունները 2-րդ խմբի ուսանողների շրջանում վեր են բարձրացնում էթնիկական հանդուրժողականության հարցը: Վերլուծության արդյունքում արձանագրվել են վիճակագրորեն նշանակալի տարբերություններ էկզիստենցիալ ամբողջականության (G-Wert) ցուցանիշի հիման վրա (t=2,59, p=0,01): Վիճակագրորեն նշանակալի տարբերություններ արձանագրվել են նաև Ինքնաօտարացում (SD) (t=2,97, 123 p<0,01), Ազատություն (F) (t=2,16, p<0,05), Պատասխանատվություն (V) (t=2,78, p<0,01), Ինքնագիտակցում (P) (t=2,01 , p<0,05), և Էկզիստենցիալություն (E) (t=2,70, p<0,01) սանդղակներով: Արդյունքներն ցույց են տալիս, որ 2-րդ խմբի ուսանողները էկզիստենցիալ ամբողջականության ավելի բարձր մակարդակ ունեն, քան 1-ին խմբի ուսանողները:

***Աղյուսակ 1. Արդյունքների համեմատական վերլուծություն***

| ***Ցուցանիշ*** | ***Խումբ 1*** | ***Խումբ 2*** | ***P*** |
|---|---|---|---|
| | Միջին ± ստանդարտ շեղում | | |
| Էթնոնիհիլիզմ | 6.62 ± 3.65 | 5.36 ± 4.83 | p<0.05 |
| Էթնիկական անտարբերություն | 9.58 ± 3.53 | 11.57 ± 4.17 | p<0.01 |
| Էթնոմեկուսացում | 5.64 ± 3.67 | 4.07 ± 4.68 | p<0.01 |
| Էթնոֆանատիզմ | 7.15 ± 3.70 | 4.84 ± 4.81 | p<0.01 |
| Էթ. Հանդուրժողականություն | 29.14 ± 4.49 | 30.73 ± 5.73 | p<0.05 |

| | | | |
|---|---|---|---|
| Սոց. Հանդուրժողականություն | 29.22 ± 4.19 | 30.9 ± 5.29 | p<0.05 |
| Հանդուրժողականության ընդհանուր մակարդակ | 87.75 ± 8.61 | 92.2 ± 12.22 | p<0.01 |
| Ինքնաօտարացում (SD) | 27.42 ± 6.61 | 30.39 ± 7.49 | p<0.01 |
| Ազատություն (F) | 41.52 ± 9.19 | 44.33 ± 9.20 | p<0.05 |
| Պատասխանատվություն (V) | 45.67 ± 11.44 | 50.51 ± 13.14 | p<0.01 |
| Ինքնագիտակցում (P) | 91.39 ± 14.56 | 95.74 ± 16.04 | p<0.05 |
| Էկզիստենցիալություն (E) | 87.19 ± 19.10 | 94.84 ± 20.96 | p<0.01 |
| Էկզիստենցիալ ամբողջականություն (G-Wert) | 178.58 ± 31.50 | 190.58 ± 34.08 | p=0.01 |

**Երկրորդ ենթավարկածի** համաձայն իրականացվել է հետազոտության արդյունքների կորելացիոն վերլուծություն, որը թույլ է տվել դիտարկել էթնիկական նույնականության տիպերի և հանդուրժողականության ցուցանիշների փոխհարաբերությունները (Աղյուսակ 2): Հայտնաբերվել են վիճակագրորեն նշանակալի նկատելի և չափավոր կապեր էթնիկական հանդուրժողականության և էթնոէգոիզմի (r=-0.504, p<0.01), էթնոմեկուսացման (r=-0.516, p<0.01), էթնոֆանատիզմի (r=-0.423, p<0.01), նորմա կամ դրական էթնիկական նույնականության (r=0.301, p<0.01) միջև: Հանդուրժողականության ընդհանուր մակարդակի և էթնոէգոիզմ (r=-0.445, p<0.01), էթնոմեկուսացում (r=-0.432, p<0.01), էթնոֆանատիզմ (r=-0.396, p<0.01) տիպերի միջև հայտնաբերվել են չափավոր կապեր: Այսպիսով, բարձր էթնոէգոիզմը, էթնոմեկուսացումը և էթնոֆանատիզմը նվազեցնում են հանդուրժողականության մակարդակը, մինչդեռ դրական նույնականությունը նպաստում է դրա բարձրացմանը:

***Աղյուսակ 2. Էթնիկական նույնականության տիպերի և հանդուրժողականության ցուցանիշների կորելացիոն վերլուծություն***

| ***Սանդղակներ*** | Էթնիկական անտարբերություն | Նորմա | Էթնոէգոիզմ | Էթնոմեկուսացում | Էթնոֆանատիզմ |
|---|---|---|---|---|---|
| Էթնիկական հանդուրժողականություն | 0.243** | **0.301**** | **-0.504**** | **-0.516**** | **-0.423**** |
| Հանդուրժողականության ընդհանուր մակարդակ | 0.262** | 0.261** | **-0.445**** | **-0.432**** | **-0.396**** |

** p < 0.01 * p < 0.05

**Երրորդ ենթավարկածի** համաձայն իրականացվել է հետազոտության արդյունքների կորելացիոն վերլուծություն և հայտնաբերվել է, որ ինքնության որոշ առանձնահատկությունները կապ ունեն էկզիստենցիալ բնութագրերի հետ (Աղյուսակ 3): Վիճակագրորեն նշանակալի չափավոր կորելացիոն կապեր են հայտնաբերվել. Ինքնատրանսցենդավորում (ST) ցուցանիշի և էթնոնիհիլիզմի միջև բացասական կապ (r=-0.417, p<0.01), ինչպես նաև նորմա կամ դրական էթնիկական նույնականություն միջև դրական կապ՝ r=0.385, p<0.01: Դրական չափավոր և թույլ կապեր է հայտնաբերվել նաև անձնային ինքնության կարգավիճակի և էկզիստենցիալ ամբողջականության ընդհանուր ցուցանիշի (r=0.307, p<0.01), Ինքնատրանսցենդավորում (ST) (r=0.335, p<0.01), Ինքնագիտակցում (P) (r=0.281, p<0.01) և Էկզիստենցիալություն (r=0.296, p<0.01)

ցուցանիշների միջև: Այս կապերը վկայում են, որ էկզիստենցիալ ցուցանիշների բարձրացումը նպաստում է ինքնության զարգացմանը:

***Աղյուսակ 3. Ինքնության առանձնահատկությունների և էկզիստենցիալ բնութագրերի փոխկապակցվածության կորելացիոն վերլուծություն***

| ***Սանդղակներ*** | ST | P | E | G-Wert |
|---|---|---|---|---|
| Էթնոնիհիլիզմ | **-0.417**** | **-0.313**** | -0.188** | -0.263** |
| Նորմա | **0.385**** | 0.294** | 0.117 | 0.21** |
| Էթնոէգոիզմ | -0.247** | -0.265** | -0.099 | -0.182** |
| Ինքնության կարգավիճակ | **0.335**** | 0.281** | 0.296** | **0.307**** |

** p < 0.01 * p < 0.05

**Հետազոտության գլխավոր վարկածի** ստուգման համար իրականացվել է ռեգրեսիոն վերլուծություն, պարզելու հանդուրժողականության մակարդակի համար կանխորոշիչ գործոնները (Աղյուսակ 4): Ռեգրեսիոն վերլուծությունը բացահայտել է էթնիկական նույնականության տիպերի, հանդուրժողականության մակարդակի և էկզիստենցիալ բնութագրերի միջև գոյություն ունեցող կապերի յուրահատկությունները ազգային միատարր և բազմատարր միջավայրերում հայ և ռուս ուսանող երիտասարդության օրինակով: 1-ին խմբում (միատարր միջավայրում) հիմնական կանխորոշիչ գործոնն է էթնոէգոիզմը: Ցուցանիշի նվազումը բարձրացնում է հանդուրժողականության մակարդակը: 2-րդ խմբում (բազմատարր միջավայրում) կանխորոշիչ գործոններն են էթնոէգոիզմը, էթնոնիհիլիզմը և Ինքնագիտակցում (P) ցուցանիշը: Էթնոէգոիզմ ցուցանիշի բարձրացումը նվազեցնում է հանդուրժողականության մակարդակը, իսկ Ինքնագիտակցում և էթնոնիհիլիզմ ցուցանիշների բարձրացումը՝ բարձրացնում:

***Աղյուսակ 4. Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները***

| **1-ին խմբի հանդուրժողականության մակարդակի ընդհանրացված մոդել** | | | | |
|---|---|---|---|---|
| Մոդել | R | R Square | Adjusted R Square | Std. Error of the Estimate |
| a.Էթնոէգոիզմ | .420[a] | .177 | .168 | 7.854 |
| **2-րդ խմբի հանդուրժողականության մակարդակի ընդհանրացված մոդել** | | | | |
| Մոդել | R | R Square | Adjusted R Square | Std. Error of the Estimate |
| a.Էթնոէգոիզմ | .504[a] | .254 | .246 | 10.612 |
| b.Էթնոէգոիզմ, Ինքնագիտակցում | .557[b] | .310 | .295 | 10.259 |
| c.Էթնոէգոիզմ, Ինքնագիտակցում, Էթնոնիհիլիզմ | .587[c] | .345 | .325 | 10.044 |

Չորրորդ՝ «Գործնական առաջարկություններ» ենթագլխում ներկայացված են հոգեբանների և ուսանողների համար նախատեսված գործնական առաջարկությունները և մեր կողմից մշակված հանդուրժողականության ձևավորման ծրագիրը, որը հիմնված է ազգային միատարր և բազմատարր միջավայրերում անձանց ինքնության և էկզիստենցիալ առանձնահատկությունների վրա:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրականացված հետազոտության արդյունքների հիման վրա հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1. Տեսական հետազոտության ընթացքում առանձնացվել են ինքնության վերաբերյալ ընդհանուր գիտական մոտեցումները (Վ. Ջեյմս, Ջ.Հ. Միդ, Է. Էրիկսոն, Ա. Ոթերման, Է. Գոֆման, Ջ.Է. Մարսիա, Մ. Շերիֆ, Ջ.Թ. Քեմփբել, Հ. Թեջֆել, Ջ. Թերներ, Լ.Բ. Շնեյդեր); քննարկվել է էթնիկական նույնականության զարգացումը (Ժ. Պիաժե, Մ. Վերկույտեն, Ն.Մ. Լեբեդևա, Գ.Ու. Սոլդատովա, Ս.Վ. Ռիժովա, Ա.Ս. Բերբերյան, Տ.Գ. Ստեֆանենկո): Տեսական ուսումնասիրության շրջանակում բացահայտվել են հանդուրժողականության հոգեբանական առանձնահատկությունները, առանձնացվել են նրա տեսակները (Ն.Մ. Լեբեդևա, Լ. Դրոբիժևա, Տ.Գ. Ստեֆանենկո, Գ.Ու. Սոլդատովա, Ա.Ս. Բերբերյան, Օ.Ռ. Տուչինա) և ուսումնասիրվել են ուսանողության հոգեբանական նորագոյացությունները (Բ.Գ. Անանև, Լ.Ս. Վիգոտսկի, Ա.Ն. Լեոնտև, Է. Էրիկսոն, Ի.Ս. Կոն, Դ.Բ. Բրոմլեյ), կատարվել է ուսանողության ինքնության և հանդուրժողականության առանձնահատկությունների նվիրված հետազոտությունների վերլուծություն (Ի.Ա. Ապոլլոնով, Ա.Ս. Բերբերյան, Օ.Ռ. Տուչինա, Ա.Կ. Լուկինա և այլն):

2. Ուսումնասիրվել են էկզիստենցիալ հոգեբանության տեսական հիմունքները (Ի. Յալոմ, Ս.Լ. Քոոլե, Ժ-Պ. Սարտր, Ս. դը Բովուար, Ս. Կիերկեգոր, Ն. Խավաջա, Ջ. Ուեբբեր, Ջ. Գրինբերգ, Կ. Յասպերս) և անձի էկզիստենցիալ բնութագրերի մոտեցումները (Է. Ֆրոմմ, Վ. Ֆրանկլ, Ա. Լենգլե, Է. վան Դոյրզեն), ինչպես նաև կատարվել է երիտասարդության էկզիստենցիալ բնութագրերի հետազոտությունների վերլուծություն: Հայ և ռուս էթնոսների հոգեկան կազմի բաղադրիչների մասին հետազոտությունների վերլուծությունը թույլ է տվել բացահայտել նրանց էթնոհոգեբանական առանձնահատկությունները ազգային միատարր և բազմատարր միջավայրերում (Վ.Գ. Կրիսկո, Ն.Մ. Լեբեդևա, Տ.Գ. Ստեֆանենկո, Ս.Մ. Հարությունյան, Լ.Գ. Պոչեբուտ):

3. Ընտրվել և հիմնավորվել են մեթոդաբանական գործիքակազմ՝ ինքնության, հանդուրժողականության և էկզիստենցիալ բնութագրերի ցուցանիշները բացահայտելու համար: Կատարվել է հետազոտություն ինքնության, հանդուրժողականության և անձի էկզիստենցիալ ամբողջականության փոխհարաբերության առանձնահատկությունների վերաբերյալ ազգային միատարր և բազմատարր միջավայրերում, հայ և ռուս ուսանողների օրինակով:

4. Էմպիրիկ հետազոտության արդյունքները վերլուծվել և մեկնաբանվել են: Կատարված էմպիրիկ հետազոտության արդյունքում բացահայտվել են միջէթնիկական փոխգործակցության փորձի համատեքստային գործոնները հայ և ռուս ուսանողների շրջանում: Առաջին մեթոդիկայի համաձայն, դիտարկվել են անձի ինքնության բովանդակային բնութագրերը, որոնք վկայում են հայ ուսանողների ինքնության բաղադրիչների ավելի բարձր տարբերակվածության մակարդակի մասին համեմատած ռուս ուսանողների հետ: Երկրորդ մեթոդիկայի համաձայն բացահայտվել են անձնային ինքնության գերիշխող կարգավիճակները. հայերի ընտրանքում դրանք են «դիֆուզային ինքնություն» և «մորատորիում», իսկ ռուսների ընտրանքում՝ «դիֆուզային ինքնություն» և «պսևդո դրական ինքնություն» տիպերը: Երրորդ մեթոդիկայի համաձայն պարզվել է, որ երկու ընտրանքներում էլ գերակայում է էթնիկական նույնականության տիպերից «նորմա կամ դրական էթնիկական նույնականություն»: Չորրորդ մեթոդիկայի օգնությամբ անցկացված հետազոտությունը պարզել է հանդուրժողականության ընդհանուր մակարդակը և դրա ասպեկտները հայ և ռուս հարցվողների շրջանում, ցույց տալով միջին մակարդակի հանդուրժողականության

գերակայությունը: Արժեքային կողմնորոշումների դիագնոստիկան կատարվել է հինգերորդ մեթոդիկայի միջոցով և բացահայտել է ուսումնասիրվող ընտրանքների արժեքային կողմնորոշումները՝ խմբի հանդեպ կողմնորոշում, համագործակցության միտում և թույլ սոցիալական վերահսկողություն, որոնք բնորոշ էին երկու ընտրանքներին, սակայն հայերի շրջանում նկատվում է փոփոխությունների հանդեպ բաց վերաբերմունք, մինչդեռ ռուս երիտասարդությունը հակված է փոփոխությունների դիմադրության: Էկզիստենցիալ բնութագրերի վերլուծությունը հայ և ռուս ուսանողների շրջանում վեցերորդ մեթոդիկայով բացահայտել է, որ ռուս ուսանողների էկզիստենցիալ բնութագրերի ցուցանիշները բարձր են, քան հայերի շրջանում: Յոթերորդ մեթոդիկայի համաձայն բացահայտվել են ավտոկարծրատիպերը և հետերոկարծրատիպերը, որոնք դրական էին երկու ընտրանքներում:

5. Իրականացվել է ստացված տվյալների վիճակագրական մշակում: Մեկնաբանված համեմատական վերլուծությունը միատարր և բազմատարր միջավայրերից հարցվողների միջև ցույց է տվել վիճակագրորեն նշանակալի տարբերություններ անձնային ինքնության և էթնիկական նույնականության որոշ միջին ցուցանիշներում, հանդուրժողականության ընդհանուր մակարդակի և տեսակների ցուցանիշներում, ինչպես նաև որոշ էկզիստենցիալ բնութագրերում: Հետազոտության արդյունքների կորելյացիոն վերլուծությունը թույլ է տվել դիտարկել էթնիկական նույնականության տիպերի և հանդուրժողականության ցուցանիշների փոխհարաբերությունները՝ հանդուրժողականության ընդհանուր մակարդակ և էթնոէգոիզմ (r=-0.445), էթնոմեկուսացում (r=-0.432) և էթնոֆանատիզմ (r=-0.396) ցուցանիշների միջև; էթնիկական հանդուրժողականություն և նորմա կամ պոզիտիվ էթնիկական նույնականություն (r=0.301), էթնոէգոիզմ (r=-0.504), էթնոմեկուսացում (r=-0.516) և էթնոֆանատիզմ (r=-0.423) ցուցանիշների միջև: Կորելյացիոն կապեր հայտնաբերվել են նաև էթնիկական նույնականության տիպերի և էկզիստենցիալ բնութագրերի միջև, հայ և ռուս ուսանողների շրջանում ազգային միատարր և բազմատարր միջավայրերում՝ Ինքնատրանսցենդավորում և էթնոնիհիլիզմ (r=-0.417), նորմա կամ պոզիտիվ էթնիկական նույնականություն (r=0.385) ցուցանիշների միջև: Կապ է հայտնաբերվել նաև անձնական ինքնության կարգավիճակի և ընդհանուր էկզիստենցիալ ամբողջականության ցուցանիշների (r=0.307), ինչպես նաև Ինքնատրանսցենդավորում (r=0.335) ցուցանիշի միջև: Ռեգրեսիոն վերլուծությունը բացահայտել է էթնիկական նույնականության տիպերի, հանդուրժողականության մակարդակի և էկզիստենցիալ բնութագրերի միջև գոյություն ունեցող կապերի յուրահատկությունները միատարր և բազմատարր միջավայրերում հայ և ռուս ուսանողության օրինակով:

6. Հետազոտության արդյունքներով մշակվել են գործնական առաջարկություններ և կազմվել է հանդուրժողականության ձևավորման ծրագիր անձնային ինքնության և էկզիստենցիալ բնութագրերի առանձնահատկությունների հիման վրա ազգային միատարր և բազմատարր միջավայրում:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում:**

*Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և SCOPUS-ի կողմից երաշխավորված պարբերականներում հրատարակված հոդվածներ՝*


1. Берберян А.С., Тепанян С.А. Взаимосвязь и межкультурные различия толерантности и экзистенциальных характеристик студенческой молодежи (на примере России и Армении)// Психологическая наука и образование, 2025, 30(6), 163–181. / Berberyan A.S., Tepanyan S.A. The relationship and intercultural differences in tolerance and existential characteristics of student youth (on example of Russia and Armenia) // Psychological Science and Education, 2025, 30(6), 163–181. Scopus (Q3), Web of Science. ISSN: 1814-2052
2. Berberyan A.S., Gevorgyan S.R., Tepanyan S.A., Berberyan H.S. Identity and value orientations in Armenian youth // Katchar Scientific Periodical, 2024 (1). P. 24-39. ISSN: 2579-2903
3. Берберян А.С., Тепанян С.А. Взаимосвязь аффективного и когнитивного компонентов этнической идентичности и толерантности молодёжи (армянской и биэтничной) // Актуальные проблемы психологического знания. Теоретические и практические проблемы психологии (научно-практический журнал), 2023, № 1 (62). С. 61-76. ISSN: 2073-8544
4. Berberyan A.S., Tepanyan S.A. The Relationship Between Ethnic Identity and Personality Traits in Armenians in the Titular Nation and the Diaspora in Russia // Katchar Scientific Periodical 1, 2023. P. 63-79. ISSN: 2579-2903
5. Тепанян С.А. Взаимосвязь этнической идентичности и особенностей личности армян из моно- и полиэтнической среды (РА и РФ) // Вестник Российско-Армянского университета (серия: гуманитарные и общественные науки), 2022, №2 (41). С.150-168. ISSN: 1829-0450
6. Берберян А.С., Тепанян С.А. Взаимосвязь экзистенциальной наполненности и компонентов Образа Я личности армян из титульного этноса и диаспоры в условиях пандемии COVID-19 // Актуальные проблемы психологического знания, 2021, №3 (56). С. 27-39. ISSN: 2073-8544


*Գտաժողովների նյութերի ժողովածուներում հրատարակված հոդվածներ՝*


7. Berberyan A.S., Tepanyan S.A. The relationship between personal identity and existential characteristics of student youth: cross-cultural studies // Proceedings of the 10th International conference on «The current issues in theoretical and applied psychology», 2025. P. 50-52.
8. Берберян А.С., Тепанян С.А. Особенности профессиональной идентичности студентов как субъектов учебно-профессиональной деятельности // Этнос и культура в эпоху глобализации: Сборник материалов III Международной научной очно-заочной конференции, 27-28 июня 2019 г. Краснодар: Изд. КубГТУ, 2019. С. 73-87.
9. Берберян А.С., Тепанян С.А. Особенности идентичности и мотивации студентов в структуре «образа-Я» // Тринадцатая годичная научная конференция (3–7 декабря 2018г.): Сборник научных статей: Социально-гуманитарные общественные науки. Часть II. Ер.: Изд-во РАУ, 2019. С. 283-292.

## ТЕПАНЯН САТЕНИК АВАГОВНА

## ВЗАИМОСВЯЗЬ ИДЕНТИЧНОСТИ, ТОЛЕРАНТНОСТИ И ЭКЗИСТЕНЦИАЛЬНОЙ НАПОЛНЕННОСТИ ЛИЧНОСТИ ИЗ МОНО- И ПОЛИЭТНИЧЕСКОЙ СРЕДЫ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 «Общая психология, теория и история психологии, психология личности». Защита диссертации состоится 17 марта 2026 года в 12:00 на заседании специализированного совета по психологии 064 КВОН при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна (0010, г. Ереван, ул. Тиграна Меца 17).

### РЕЗЮМЕ

**Актуальность исследования** обусловлена необходимостью выявления особенностей влияния психологических аспектов идентичности и экзистенциальной наполненности личности на формирование толерантности. Современные реалии смешения культур и многообразия общества делают актуальными задачи формирования толерантного отношения. Актуальность настоящего исследования обусловлена также тем фактором, что вопрос о взаимосвязи идентичности, толерантности и экзистенциальной наполненности личности из моно- и полиэтнической среды остаётся малоизученным. Рассмотрение конкретных общностей, существующих в едином социокультурном пространстве, поможет раскрыть зависимость толерантности от контекста моно- и поликультурного взаимодействия студенческой молодёжи Армении и России. В связи с этим особый интерес представляет сопоставление двух народов с учётом различий социокультурной среды и этнодифференцирующих признаков. Необходимо отметить, что количество подобных комплексных исследований на базе армянской студенческой молодёжи ограничено.

**Целью диссертации** является исследование взаимосвязи идентичности, толерантности и экзистенциальной наполненности студенческой молодёжи из моно- и полиэтнической среды на примере армянской и русской студенческой молодёжи.

**Задачи исследования.** Цель диссертационного исследования определила его задачи: 1. выявить основные научные подходы к понятиям идентичность и этническая идентичность, раскрыть психологические особенности толерантности, охарактеризовать её виды; 2. рассмотреть психологические новообразования студенческой молодежи и провести анализ исследований, посвящённых особенностям идентичности и толерантности студенческой молодёжи; 3. рассмотреть концептуальные основы экзистенциальной психологии, изучить подходы к экзистенциальной характеристике личности, проанализировать исследования экзистенциальных характеристик личности молодёжи; 4. выявить этнопсихологические особенности личности армян и русских из моно- и полиэтнической среды; 5. обосновать методический инструментарий для выявления показателей толерантности, идентичности, и экзистенциальных характеристик личности; 6. провести эмпирическое исследование по взаимосвязи идентичности, толерантности и экзистенциальной наполненности личности из моно- и полиэтнической среды на примере армянской и русской студенческой молодёжи; проанализировать и интерпретировать результаты эмпирического исследования; 7. разработать программу формирования толерантности на базе особенностей идентичности и экзистенциальных характеристик личности из моно- и полиэтнической среды.

**Генеральная гипотеза исследования:** Предполагается, что существует корреляция между типами идентичности, уровнем толерантности и экзистенциальными

характеристиками личности армянской и русской студенческой молодёжи в моно- и полиэтнической среде.

**Частные гипотезы исследования:**

1. предполагается, что существуют различия в некоторых средних показателях психологических особенностей идентичности, характеристик толерантности и экзистенциальных характеристик личности в зависимости условий моно- и полиэтнической среды на примере армянской и русской студенческой молодёжи;

2. предполагается, что существует взаимосвязь между некоторыми типами этнической идентичности и показателями толерантности личности студенческой молодёжи;

3. предполагается, что существует взаимосвязь между некоторыми особенностями идентичности и экзистенциальными характеристиками студенческой молодёжи.

**Научная новизна диссертации.** Связь экзистенциальных характеристик личности с особенностями толерантности и идентичности личности впервые исследуется комплексно. Впервые представлен сравнительный анализ психологических аспектов идентичности, толерантности и экзистенциальных характеристик личности армянской и русской студенческой молодёжи, подтвердивший существование значимых различий между рядом показателей. Получены новые эмпирические данные о влиянии особенностей идентичности и экзистенциальных характеристик на уровень толерантности на примере армянской и русской студенческой молодёжи. Выявлены различия в зависимости от контекста среды: экзистенциальные характеристики оказывают прямое влияние на уровень толерантности в полиэтнической среде, но теряют актуальность в моноэтнической.

**Теоретическая и практическая значимость.** Результаты исследования позволят расширить представление о понятиях идентичности и толерантности, их социально-психологических особенностях в моно- и полиэтнической среде. Данные конкретизируют связь экзистенциальной наполненности с уровнем толерантности и особенностями идентичности. Материалы диссертации могут быть использованы для обобщения и систематизации имеющихся данных, а также могут быть интегрированы в учебные курсы по психологии. Практическая значимость исследования определяется возможностью применения результатов для разработки методов формирования толерантной личности. Результаты исследования и разработанная психологическая программа могут быть использованы в консультативной практике и психологических службах для формирования позитивной идентичности и поиска личностных ресурсов для решения экзистенциальных проблем у представителей различных этнических групп. Результаты исследования могут быть использованы при разработке тренинговых программ и методических материалов, направленных на формирование позитивной идентичности и развитие толерантного отношения.

**Апробация результатов исследования**. Основные результаты исследования были представлены на заседаниях кафедры психологии РАУ, на локальных и международных конференциях. Материалы исследования отражены в 9 публикациях автора, из них 1 статья в журнале, индексируемом Scopus (Q3) и Web of Science, 3 статьи в журналах, индексируемых ВАК РА, и 2 статьи в журналах, индексируемых ВАК РФ.

**Структура диссертации.** Диссертация состоит из введения, трёх глав, выводов, заключения, списка литературы и 4 приложений. Список литературы включает 258 источников, из них – 96 на иностранных языках. Работа иллюстрирована 17 рисунками и 18 таблицами. Объем работы без учета приложений – 162 страницы.

**TEPANYAN SATENIK AVAG**

## THE RELATIONSHIP BETWEEN IDENTITY, TOLERANCE AND EXISTENTIAL FULLNESS OF PERSON FROM MONO- AND POLYETHNIC ENVIRONMENT

Dissertation for the degree of candidate of psychological sciences in the specialty 19.00.01 «General Psychology, Theory and History of Psychology, Psychology of Personality». The defense of the dissertation will take place on March 17, 2026, at 12:00 PM, at the session of Degree Awarding Commission 064 specializing in Psychology of the Higher Education and Science Committee of the RA at Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan (17 Tigran Mets str., 0010, Yerevan).

### SUMMARY

**The relevance of the study** is determined by the necessity to identify the peculiarities of the influence of the psychological aspects of identity and the existential fulfillment on the formation of tolerance. Modern realia of cultural intermixing and social diversity increase the relevance of the task of fostering tolerant attitudes. The current research is also relevant due to the fact that the relationship between identity, tolerance, and the existential fullness of person from monoethnic and polyethnic environments remains insufficiently researched. Examining specific communities existing within a shared sociocultural space will help reveal the dependence of tolerance on the context of mono- and polyethnic environment among Armenian and Russian university students. In this regard, particular interest lies in comparing these two ethnic groups, taking into account the differences in their sociocultural environments and ethno-differentiating characteristics. It should be noted that the number of such comprehensive studies focusing on Armenian student youth is limited.

**The aim of the dissertation** is to study the relationship of identity, tolerance and existential fullness of student youth from mono- and polyethnic environment on the example of Armenian and Russian student youth.

**The objectives of the study.** The aim of the dissertation determined its objectives as follows: 1. Identify the main scientific approaches to the concepts of identity and ethnic identity, reveal the psychological peculiarities of tolerance and characterize its types. 2. Examine the new psychological formations of student youth and analyze existing studies on the peculiarities of identity and tolerance of student youth. 3. Explore the conceptual foundations of existential psychology, study approaches to the existential analysis of person, and analyze studies devoted to existential characteristics in student youth. 4. Identify the ethnopsychological peculiarities of Armenians and Russians from monoethnic and polyethnic environments. 5. Substantiate the methodological toolkit for identifying the indicators of tolerance, identity, and existential characteristics of person. 6. Conduct an empirical study on the relationship between identity, tolerance, and existential fullness of person from monoethnic and polyethnic environments on the example of Armenian and Russian student youth; analyze and interpret the results of the empirical study. 7. Develop a program on formation of tolerance on the basis of the peculiarities of identity and the existential characteristics of persons from monoethnic and polyethnic environments.

**General hypothesis of the study:** we assume, that a correlation exists between the types of identity, the level of tolerance and the existential characteristics of person in the Armenian and Russian student youth in mono- and polyethnic environment.

**Sub-hypotheses of the study:**

1. we assume, that differences exist between certain means of the psychological peculiarities of identity, characteristics of tolerance and existential characteristics of person

depending on the conditions of mono- and polyethnic environments on the example of Armenian and Russian student youth;

2. we assume, that a relationship exists between certain types of ethnic identity and tolerance indicators of student youth;

3. we assume, that a relationship exists between certain peculiarities of identity and existential characteristics of student youth.

**The scientific novelty of the dissertation.** The relationship between the existential characteristics of person and the peculiarities of tolerance and identity development is studied comprehensively for the first time. A comparative analysis of the psychological aspects of identity, tolerance, and existential characteristics in Armenian and Russian student youth has also been conducted for the first time, confirming statistically significant differences between several indicators. New empirical data regarding the influence of identity and existential characteristics on the level of tolerance on the example of Armenian and Russian students have been obtained. The study revealed differences in tolerance depending on the context of the environment: existential characteristics have a direct impact on the level of tolerance in polyethnic environments but lose their relevance in monoethnic ones.

**The theoretical and practical significance.** The research findings contribute to expanding the understanding of the concepts of identity and tolerance, their socio-psychological features among persons from monoethnic and polyethnic environments. The findings allow to specify the relationship between existential fullness and the level of tolerance and peculiarities of identity. The materials of the dissertation may be used to summarize and systematize existing data, as well as be integrated into educational programs in psychology. The practical significance of the study is conditioned by the possibility of application of the results for the development of methods for formation of a tolerant personality. The results of the research, as well as the psychological program developed by the author, can be applied in consultations and psychological services aimed at fostering positive identity and discovering personal resources for resolving existential problems among representatives of other ethnic groups. The findings may also be employed in the development of training programs and methodological materials focused on the formation of positive identity and the development of tolerant attitudes.

**Approbation of the research results.** The main provisions and results of the research were presented at meetings of the Department of Psychology of the Russian-Armenian University, as well as at local and international conferences. The research materials are reflected in 9 publications by the author, including one article in a journal indexed by Scopus (Q3) and Web Of Science, three articles in journals indexed by the Higher Attestation Commission of the Republic of Armenia and two in journals indexed by the Higher Attestation Commission of the Russian Federation.

**The structure of the dissertation.** The dissertation consists of an introduction, three chapters, inferences, a conclusion, a reference list, and four appendices. The reference list includes 258 literary sources, of which 96 are in foreign languages. The work contains 17 figures and 18 tables. The total volume, excluding appendices, is 162 pages.

